

2025

**ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**

---

ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Գոշ բնակավայր

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝  
«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ**

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Սևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Գոշ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ տնօրեն Գ. Ազիզյան



Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2025

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 5

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն..... 5

1.2 Հապավումներ..... 5

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը ..... 6

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը ..... 7

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) ..... 10

1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*..... 10

1.5.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր*..... 11

1.5.3 *Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ*..... 15

1.5.4 *Իրավիճակային հատակագիծ*..... 16

1.5.5 *Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ*..... 17

1.5.6 *Ժամանակացույց*..... 20

1.5.7 *Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ* ..... 21

1.5.8 *Զեռուցում , հովացում և օդափոխություն* ..... 22

1.5.9 *Էլեկտրամատակարարում* ..... 24

1.5.10 *Արևային ֆոտովոլտային համակարգ*..... 25

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ ..... 26

2.1 Շինարարության պայմանները..... 27

2.2 Շինարարության ժամկետները..... 28

2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը..... 28

2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները..... 29

2.4.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* ..... 29

2.4.2 *Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը* ..... 31

2.5 Թափոնների կառավարում ..... 33

2.6 Աղմուկ և թրթռում:..... 33

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶՄԱՊԱՏՈՒՄ ..... 34

3.1 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ..... 37

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ..... 38

4.1 Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները ..... 38

4.2 Կլիմայական պայմանները ..... 38

4.3 Օդային ավազան..... 40

4.4 Ջրային ռեսուրսներ ..... 41

4.5 Հողածածկ..... 43

4.6 Կենսաբազմազանություն..... 43

4.6.1	Բուսական աշխարհ .....	43
4.6.2	Կենդանական աշխարհ .....	46
4.7	Պատմամշակութային հուշարձանների ցանկ .....	<b>Ошибка! Закладка не определена.</b>
4.8	Բնության հուշարձաններ .....	<b>Ошибка! Закладка не определена.</b>
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	55
5.6	Ռիսկերի գնահատում .....	55
5.7	Արտանետումների աղբյուրները .....	56
5.8	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	56
5.8.1	<i>Մթնոլորտային օդ</i> .....	56
5.8.2	<i>Ջրային ռեսուրսներ</i> .....	57
5.8.3	<i>Հողային ռեսուրսներ</i> .....	57
5.8.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i> .....	57
5.8.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i> .....	58
5.8.6	<i>Աղմուկ և թրթռում</i> .....	59
5.8.7	<i>Թափոնների կառավարում</i> .....	59
5.8.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i> .....	60
5.8.9	<i>Էներգային այրողության միջոցառումներ</i> .....	60
6	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	60
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	62
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ .....	65
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	70
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	71

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	Ք. Երևան, Չարենցի փ. 1
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Գոշ քնակավայր
Հեռախոս`	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՄՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Սույն հաշվետվությունը մշակված է ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Գոշ բնակավայրում 200 աշակերտական տեղով և երկու խումբ մանկապարտեզի 40սան/տեղ հզորությամբ կրփահամալիրի կառուցման համար:

Ծրագրի նպատակն է Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում առաջնահերթ համարվող դպրոցների ուժեղացումը կամ նորի կառուցումը: Դպրոցներն ամրացնելու կամ նորը կառուցելու պարագայում, որպես ծրագրի վերջնական արդյունք կապահովվի սեյսմակայուն դպրոցների շենքերի բարելավված տեսակարար կշիռը:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Գոշ բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

#### **1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Գոշ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Մահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2023) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական

փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ

վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք** (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),**

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.):**

**«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք**

**ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի Ա 781-Ն որոշում**

**ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում**

**ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 71-Ն որոշում**

**ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում**

**ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում**

**ՀՀ կառավարության 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշումը՝ ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**«ՀՀ ջրային օրենսգիրքը» ենդունված 2002 թվականի հունիսի 4-ին**, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

200 աշակերտական տեղով և երկու խումբ մանկապարտեզի 40 սան/տեղ հեղորոշամբ կրթահամալիրը նախատեսված է կառուցել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրում:

Բնակավայրը գտնվում է տաք կլիմայական և II սեյսմիկ գոտիում:

Գոշ գյուղը Իջևան մարզկենտրոնից գտնվում է 30.0 կմ հեռավորության վրա դեպի հարավ-արևմուտք:

Հատկացված հողատարածքը գտնվում է գյուղի կենտրոնական մասում , ներկայիս վթարային դպրոցի տարածքում:

Դպրոցի տարածքով է անցնում բնակիչներին սպասարկող գրունտային ճանապարհ ,որի պատճառով դպրոցն ունի երկու կադաստրային վկայական / վկ.11-023-0133-0016 -0.452 հա; և վկ.11-123-0133-0045 -0.05012 հա /, ընդհանուր մակերեսով - 5021.0 ք.մ:

Տեղամասի ռելիեֆը ունի ընդհանուր թեքություն արևմուտքից-արևելք , մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1097.0 - 1104.0 մ սահմաններում:

Տարածքը համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում /a=0.4g/ գրունտային պայմանները ըստ սեյսմիկ հատկությունների 3-րդ կարգի:

Նախագիծի իրականացնելիս հաշվի են առնվել նաև համայնքի բնակիչների և վարչական ղեկավարների շահերը և առաջարկները բարեկարգման աշխատանքների և այլ բաղադրիչների վերաբերյալ հաշվի առնելով որ հենց իրենք են լինելու տվյալ նախագծի շահառուները:

Կառուցապատման ենթակա տարածքի հարևանությամբ են գտնվում մեկ կամ երկու հարկանի բնակելի և ոչ բնակելի շինություններ:

ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 11-023-0133-0016

Մակերեսի չափը (հա)՝ 0.452

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Կադաստրային ծածկագիրը՝ 11-023-0133-0045

Մակերեսի չափը (հա)՝ 0.05012

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ըստ կատարված ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության տարածքում բացակայում է բուսահողի շերտ:

Կառուցապատման ենթակա տարածքում առկա է ազատամարտիկներին նվիրված հուշարձան: Շինարարական աշխատանքների ընթացքում հուշարձանը կամ ժամանակավոր կապամոնտաժվի կամ կծածկվի թաղանթով չվնասելու համար:

Օռոտահատումներ չի նախատեսվում, տարածքը ծանրաբեռնված է քանդման ենթակա շինություններով՝ հին դպրոցի շենք, մարզադահլիճ, չգործող վթարային կաթսայատուն, չգործող տրանսֆորմատորային ենթակայան,

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

### **1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր**

#### **Քանդման աշխատանքներ**

Հողատարածքը ծանրաբեռնված է ապամոնտաժման ենթակա շինություններով:

Գոյություն ունեցող դպրոցի շենքը իրենից ներկայացնում է հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիայով երկհարկ շինություն՝ տանիքը պատված մետաղական թիթեղներով: Նախատեսվում է ապամոնտաժել և մինչ նոր դպրոցի շինարարությունը սկսելը:

Ապամոնտաժման աշխատանքների իրականացման համար կառուցապատող ընկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի տեղական ինքնակառավարման մարմիններին, քանդման թույլտվություն ստանալու համար: Քանդման աշխատանքները կիրականացվեն համաձայն քանդման աշխատանքների նախագծի դրույթների /առանց պայթեցման/, որը կներկայացվի լիազոր մարմնին:

Քանդման աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբը տարածքում չի կուտակվելու, անմիջապես տեղափոխվելու է նախապես համայնքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր: Շինարարական աղբի ծավալը կկազմի մոտ 2300մ<sup>3</sup>:

Քանդման աշխատանքների ընթացքում կիրականացվեն բոլոր այն բնապահպանական մեղմացնող միջոցառումները, որոնք ներկայացված են սույն հաշվետվության 5 գլխում:

Նոր կրթահամալիրի կառուցման աշխատանքները կսկսվեն քանդման աշխատանքները ավարտելուց հետո:

#### **Կրթահամալիրի կառուցում**

Ելնելով դպրոցի տարածքի սղությունից շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երկու իրար կցված ծավալներ՝

- երեք հարկանի հիմնական դպրոցի մասնանաշենք
- մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենք:

Հիմնական ուսումնական մասնաշենքում նախատեսված է 16 դասասենյակ, 5 կաբինետ և մեկ անհատական պարապմունքների սենյակ: Մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի համար օգտագործված է Հայնախագիծ ԲԲԸ կողմից մշակված տիպային նախագիծը:

Երեք հարկանի մասնաշենքի 0.00 նիշի 1-3 և B-G\*առանցքների հատվածում առանձին մուտքով նախատեսված է 40 տեղանոց մանկապարտեզ կազմված 2-ական ննջասենյակներից և խաղասենյակներից, սանհանգույցներից և այլ սենքերից:

Մանկապարտեզը ներքին միջանցքով կապված է կրթահամալիրի հետ, որտեղ գտնվում է խոհանոցը, որ սպասարկում է սնունդով մանկապարտեզի սաներին և դպրոցի աշակերտներին:

Նույն նիշի վրա կազմակերպված է կրթահամալիրի գլխավոր մուտքը:

5-6 և F\*-G\*առանցքների հատվածում կրթահամալիրը ունի նաև 2-րդ մուտք, որը գտնվում է լայնական ճակատի վրա, մանկապարտեզի մուտքի հարևանությամբ, բոլոր մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

3-7 առանցքներում 0.00 վրա նախագծով տեղաբաշխված են խոհանոցը, բուֆետը, տարրական երկու դասարան, սանհանգույցներ, աստիճանավանդակ:

0.00, 3.30, 6.60 նիշերի և -3.30 նիշում գտնվող հարկերը իրար հետ կապված են աստիճաններով և վերելակով հենաշարժական խնդիրներ ունեցող հաշմանդամ անձանց համար:

-3.30 նիշի նկուղային հարկը օգտագործվում է որպես թաքստոց դպրոցի և մանկապարտեզի համար: Այս հարկում նախատեսված են սանհանգույցներ, ցնցուղարաններ հանդերձարաններով, բուժկետ, պահոցներ, ջրի ռեզերվուարներ, կաթսայատուն, էլեկտրավահանակային, սննդի ընդունման կետ, ռադիոհանգույց: Նույն նիշից կազմակերպված է տարհանման ելք դեպի արտաքին տարածք և մուտքեր դեպի մարզադահլիճ ու հանդիսությունների դահլիճ:

Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար, մարզադահլիճի չափերն են  $27.4 \times 18.0$  մ, որն ունի 60 դիտատեղ կազմակերպված 0.00 նիշում: Երկու դահլիճների սրահները ունեն տարհանման արտաքին ելքեր աստիճաններով և թեքահարթակներով:

Դպրոցի 2-րդ հարկում 3.30 նիշի վրա նախատեսված է 7 դասասենյակ, քիմիայի-կենսաբանության լաբորատորիա, ֆիզիկայի-աշխարհագրության կաբինետը, ուսուցչանոցը, տնօրենի առանձնասենյակը, սանհանգույցներ և այլ նշանակության սենքեր:

Դասասենյակները նախատեսված են 12 աշակերտի համար և ունեն տեղաքանակը ավելացնելու հնարավորություն:

Դպրոցի 3-րդ հարկում 6.60 նիշի վրա նախատեսված է 7 դասասենյակ, անհատական պարապմունքների, նախնական զինպատրաստության, աշխատանքի - տեխնոլոգիաների,

արխիվի և մանկավարժա-հոգեբանական ծառայության մատուցման սենյակներ, սանհանգույցներ և այլ նշանակության սենքեր:

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսուլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:

Տարածքի տնտեսական գոտում տեղադրված են կոյուղու մաքրման կայանը, մաքրված ջրի ավազանը, ջերմոցը և 400 կվա հզորությամբ էլեկտրաէներթակայանը:

Դպրոցի կենտրոնական մուտքը կազմակերպված է նոր կառուցվող ճանապարհի կողմից: Տնտեսական բակի մուտքը կազմակերպված է հիմնական գյուղամիջան ճանապարհի կողմից 2-րդ դարպասից:

Տարածքի կանաչապատման ընդհանուր մակերեսը կազմում է - 970.81 ք.մ:

Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատված է: Նախատեսվում է ճանապարհի ասֆալտապատում, մայթերի և սավաճքների սալարկում բետոնե գունավոր մայթի սալիկներով, եզրաքարերի տեղադրում բազալտից, խաղաղաշտի և սպորտ հրապարակի հատակների իրականացում հատուկ խառնուրդով, ռետինե ծածկույթով և արհեստական խոտածածկույթով:

**Տեխնիկատնտեսական ցուցանիշներ**

Տ Ե Ն Ն Ի Կ Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ց ՈՒ Ց Ա Ն Ի Շ Ն Ե Ր

Հ/Հ	ԱՆՎՈՒՄ	Չ/Մ	ՔԱՆԱԿ
1	2	3	4
1	ԴՊՐՈՑԻ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ /ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ/	ԱԵ-ՐՏ	200
2	ՄԱՆԿԱՊԱՐՏԵՑԻ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ /ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ/	ԵՐԵՍԱ	40
3	ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	Ք.Ս	5021
4	ԿՈՆՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	Ք.Ս	1763.9
5	ԿՈՆՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՈԿՈՍԸ	%	35.1
6	ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ ՈՐԻՑ՝ 0.00 միջից ցածր	Ք.Ս	3332.60 1066.81
7	ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՕԳՏԱԿՐ ՄԱԿԵՐԵՍԸ ՈՐԻՑ՝ 0.00 միջից ցածր	Ք.Ս	3114.35 1033.35
8	ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ 0.00 ՆԻՇՈՒՄ	Ք.Ս	779.60
9	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾԱԿԱԼԸ ՈՐԻՑ՝ 0.00 միջից ցածր	Խ.Ս	55425.2 3520.50

1	2	3	4
10	ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	Ք.Ս	1539.28
11	ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՏՈԿՈՍԸ	%	30.70
12	ՈՒՆԻԿԵՐՍԱԼ ՍՊՈՐՏ ՀՐԱՊԱՐԱԿ	Ք.Ս	354.1
13	ԼՐԱԿԱԶՄ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՑԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ	ԿԿԱ	400
14	ԱԿՏՈԿԱՅԱՏՏԵՐԵՐ	ՀԱՏ	3
15	ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ	ՍԿՐԿ	3
16	ԶԵՐՄՈՑ	Ք.Ս	32.0
17	ՄԱՆԿԱԿԱՆ ԽՈՒՆԿՐԱՊԱՐԱԿՆԵՐ	Ք.Ս	120.82
18	ՄԱՅԹԵՐ	Ք.Ս	569.90
19	ՃԱՆԱՊԱՐԿՄԵՐ	Ք.Ս	641.00

Նախագիծը կազմելիս հիմք են ընդունվել հետևյալ նորմերը.

- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ IV-16.01.01-2008 «ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 10-01-2014 «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


- ՀՀՇՆ 30-01-2014 «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 30-02-2022 «ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 13.01-2022 «ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գործող կոմունիկացիաների մոտ կատարվող հողային և շինարարական աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել համաձայն բոլոր նորմատիվ պահանջների:

1.5.3 Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ



- ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ
1. ՆԱԽԱԳԾՎՈՂ ԴՊՐՈՑ
  2. ՀԱՍՆԱԿՑԱԾ ՍՊՈՐՏ ՀՐԱՊԱՐԱԿ
  3. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ 400 կվա
  4. ԶԵՐՈՑ
  5. ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ
  6. ՄԱՔՐԿԱԾ ԶՐԻ ՈՇԶԵՐՎՈՒՄ
  7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱԿՏՈՎԱՅԱՆԱՏԵՐԻ
  8. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԿ
  9. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՔԻ ԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՑՈՒՄՆԵՐԻ ՍԱՆՐԱԿԱԾ ՀԱՐՁԱԿ
  10. ՀԱՆԳՍԻ ՀԱՐՁԱԿՆԵՐ
  11. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱԿՐԱՊԱՐԱԿՆԵՐ
  12. ՏԱՂԱԿԱՐՆԵՐ
  13. ԱԶԱՍԱՄՈՏԻԿՆԵՐԻՆ ՆԿԻՐԿԱԾ ՀՈՒՄՈՋԱՆ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	ՆԱԽԱԳԾՎՈՂ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾԻ ԶԱՆԿԱՊԱՏ		ԿԱՆԱՉԱՊԱՏ ՀԱՏՎԱԾՆԵՐ
	ԱՊՐՈՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԶԱՆԿԱՊԱՏ		ՀԵՆԱՊԱՏԵՐ
	ՓՈՂՈՑՆԵՐ, ՆՐԱՎԱՑՔՆԵՐ		
	ՆԱԽԱԳԾՎՈՂ ԴՊՐՈՑ		
	ԳՐՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀՐԱՄԱՍԵՐ		
	ԳՐՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏՆԵՐ		

ՏԵՆՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄ	Չ/Մ	ՔԱՆԱԿ
1	2	3	4
1	ԴՊՐՈՑԻ ՀՈՐՈՒԹՅՈՒՆԸ /ՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ/	ԱՇՐՏ	200
2	ՍԱՆԱՊԱՐՏԵԻ ՀՈՐՈՒԹՅՈՒՆԸ /ՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ/	ԵՐԵՎԱ	40
3	ՀՈՂԱՄԱԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	5021
4	ԿԱՌՈՒՑՄԱՍՏԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	1763.9
5	ԿԱՌՈՒՑՄԱՍՏԱՆ ՏՈՎՈՍԸ	%	35.1
6	ԿՐԹԱԿԱՄԱԽԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ ՈՐԻՑ 0.00 ԳՆՉԻՑ ԳՍԹԻ	ՔՄ	3332.60 1066.81
7	ԿՐԹԱԿԱՄԱԽԻ ՕՃԱԿԱՐ ՄԱԿԵՐԵՍԸ ՈՐԻՑ 0.00 ԳՆՉԻՑ ԳՍԹԻ	ՔՄ	3114.35 1033.35
8	ԿՐԹԱԿԱՄԱԽԻ ՄԱԿԵՐԵՍԸ 0.00 ՆԻՇՈՒՄ	ՔՄ	779.80
9	ԵՐԱՐԱՐԱԿԱՆ ԵՆԿԱԿԸ ՈՐԻՑ 0.00 ԳՆՉԻՑ ԳՍԹԻ	ԽՍ	55425.2 3520.50

1	2	3	4
10	ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	1539.28
11	ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏՈՎՈՍԸ	%	30.70
12	ՈՒՆԻԿԵՐՈՒՄ ԱՊՐՈՑ ՀՐԱՊԱՐԱԿ	ՔՄ	354.1
13	ԼՈՂՎԱԶՍ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ	ԿՎԱ	400
14	ԱԿՏՈՎԱՅԱՆԱՏԵՐԵՐ	ՀԱՏ	3
15	ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ	ԽԿՐԿ	3
16	ԶԵՐՈՑ	ՔՄ	32.0
17	ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱԿՐԱՊԱՐԱԿՆԵՐ	ՔՄ	120.82
18	ՄԱՅՅԵՐ	ՔՄ	569.90
19	ՃԱՆԱՊԱՐԱՆԵՐ	ՔՄ	641.00

Կատարող  
Исполнитель

0025 Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան, Չարենցի 1  
Էլ. փոստ info@amproject.am  
0025 Республика АРМЕНИЯ  
г. Ереван ул. Чаренца 1  
Эл. почта info@amproject.am

Պատվիրատու  
Заказчик

ՀՀ ԲՈՒՄԱՑԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
КОМИТЕТ ГРАДОСТРОИТЕЛЬСТВА РА

Նախագիտ անվանումը

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՒՋԱՆ ՀԱՍՆԱՅԵՐ ԳՐԵ ԳՅՈՒՐԻ 200 ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ 2 ՆՈՒՍԻ 40 ՄԱՆՏԵՐ ՀՈՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՄԱԽԻ ՆԱԽԱԳԻՑ

Наименование проекта

Проект общеобразовательного комплекса на 200 учащихся и детсада на 2 группы в селе Гош общины Дилижан Тавушского марза РА

Փուլ Стадия	Սկս Начало	Ավրո Акт.дел	Փրց Контр	Հատոր Тотл
ԱՆ РН	ԳՀ ГП	1		

Գծագրի անվանում  
Наименование чертежа

ԳԼՆԱԿՈՐ ԴՏԱԿԱԳԻՑ  
ГЕНПЛАН

Գծագիր  
Чертеж

ԳՀ - 6  
ГП -

Էլ. ֆայլ  
Эл. файл

G 100.06

Մասշտաբ  
Масштаб

1:500

Կատարող բաժնի անվանումը  
Наименование исполнительного отдела

Մ. Ֆարսյանի ճարտարապետական արվեստանոց  
Архитектурная мастерская М.Фарсына

ՆԱԶ ГАП	Ֆարսյան Մ. Фарсыан М.
ՆԱԳ ГАП <td>Ջանյուց Ա. Джануцц А.</td>	Ջանյուց Ա. Джануцц А.
Բաժնեկ Проектур.	Ֆարսյան Մ. Фарсыан М.
Գլխ. կոնստր. Гл. констр.	Սողոմոնյան Հ. Согомонян А.
Նախագծեց Проектур.	Ֆարսյան Մ. Фарсыан М.
Ստուգեց Проверил	Ջանյուց Ա. Джануцц А.

Պատվեր  
Заказ



ՀՀ ԲԿ-ՀՄՆԻՇՐ-24/59

Մասնագիտ Депт	Արհիվ. համար Архив. номер	Փոփոխանման Изм. номер
	3588	

Փոփոխություններ  
Изменения

1
2
3
4
էջ стр.
6
Ֆորմատ Формат
A 2

1.5.4 Իրավիճակային հասակագիծ



Կոորդինատներ		
	X	Y
1	8500163.8788	4510645.6566
2	8500179.6509	4510638.4635
3	8500180.2887	4510638.7721
4	8500186.7112	4510641.6200
5	8500199.0777	4510658.1590
6	8500205.7544	4510660.0780
7	8500220.1748	4510664.2226
8	8500224.2078	4510665.4112
9	8500224.0191	4510694.8615
10	8500229.3966	4510694.9228
11	8500224.6706	4510711.5274
12	8500224.4351	4510712.4218
13	8500222.2916	4510716.2816
14	8500220.5486	4510718.7152
15	8500218.3639	4510720.6188
16	8500216.3245	4510720.5623
17	8500193.3541	4510726.4491
18	8500187.8701	4510725.2548
19	8500187.0465	4510724.8834
20	8500177.7569	4510713.7769
21	8500171.3133	4510705.4604
22	8500151.1769	4510679.0622
23	8500145.1842	4510671.4511

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 
- 
- 
- 
- 
- 
- 
- 

ՆԱԽԱԳԾՎՈՂ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾԻ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՈՒՐԱԿՐԻՇ S-1 0016 ; 4520.0 քմ.

ՆԱԽԱԳԾՎՈՂ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾԻ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՈՒՐԱԿՐԻՇ S-2 0045 ; 501.2 քմ.


ԳՈՇՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴՊՐՈՑԻ ԿԵՐԱՎՅԻՆ ԵՆԵՔ

ԳՅՈՒԿՊԵՏԱՐԱՆ

ԲՈՒԻԿԵՏ

ՀԱՐԱԿԻՑ ԲՆԱԿԵՆ ԵՆԵՐ

ՏԱՐԱԾԻ ԵՐԱՎՈՐՁԱՅԻՆ ԿԵՏԵՐ



Հայաստանի Հանրապետություն  
ՀՀ Կառուցման նախարարություն

0025 Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան, Չարենցի 1  
էլ. փոստ info@armproject.am  
0025 Республика АРМЕНИЯ  
г. Ереван ул. Чаренца 1  
Эл. почта info@armproject.am

Պատվիրատու  
Заказчик  
ՀՀ ԲՆԱԿԱՎԱԿՆԻՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
КОМИТЕТ ГРАДОСТРОИТЕЛЬСТВА РА

Նախագծի անվանումը  
ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴՈՒԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԳՅՈՒՐԻ 200 ԱՇԿԵՐՏԵՐԻ ԵՎ 2 ԿՈՒՐՔ 40 ՍԱՆՏԻՐ ՀՈՂՈՒԹՅԱՔ ԿՈՒՅԸԱՄԱԽԻՐ ՆԱԽԱԳԻՇ

Наименование проекта  
Проект общеобразовательного комплекса на 200 учащихся и детсада на 2 группы в селе Гош общины Дилижан Тавушского марза РА

Փուլ Стадия	Սկզբ Часть	Արձ. Альбом	Գիրք Книга	Հատրդ Том
ԱՆ РН	ԳՀ ГП	1		

Գծագրի անվանում  
Наименование чертежа  
ԻՐԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՔԻ  
ՏԱՐԱԾԻ ԵՐԱՎՈՐՁԱՅԻՆ ԿԵՏԵՐԻ  
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ  
СИТУАЦИОННЫЙ ПЛАН; КООРДИНАТЫ  
ПОВОРОТНЫХ ТОЧЕК ТЕРРИТОРИИ

Գծագրի  
Чертеж

Մասշտաբ  
Масштаб

1:500

Կատարող բաժնի անվանումը  
Наименование исполнительного отдела  
Մ. Ֆարսյանի ճարտարապետական արվեստանոց  
Архитектурная мастерская М. Фарсяна

ՆԳՃ ГАП		Ֆարսյան Մ. Фарсян М.
ՆԳԻ ГИП		Զանունց Ա. Джанунц А.
Քաղ. ղեկ. Проектир.		Ֆարսյան Մ. Фарсян М.
Վիճ. կոնստր. Гл. констр.		Սողոմոնյան Հ. Согомонян А.
Նախագծեց Проектир.		Ֆարսյան Մ. Фарсян М.
Ստուգեց Проверил		Զանունց Ա. Джанунц А.

Պատվիր  
Заказ

ՀՀԲԿ-ՀԱՆԱԾՔԻ-24/59

Անվանում Дата	Կրկին Архив. номер	Պարզապատ Ивент. номер
	3588	

Փոփոխություններ  
Изменения

1			
2			
3			
4			
Էջ стр.	4	Ֆորմատ Формат	A 2



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՇԱՆՆԵՐ**
- Կառուցվող դարձող եզրագիծ
  - Ընթացիկ փուլերով կառուցվող շինություններ
  - Տարածքի սահմանը
  - Ժամանակավոր ցանկապատ
  - Գարպաս
  - Կոնտեյներ(վազոն)
  - Ամիվների վազոնան կետ
  - Ժամանակավոր ճանապարհ
  - Բաց գահեստ
  - Ժամանակավոր ծածկարան
  - Օդով անցնող ժամանակավոր էլեկտրական մաղուխ
  - Լուսարձակ
  - Հավաորիմային հիրաւան
  - Ժամանակավոր ընդդարան
  - Անդրի ընդունման կետ
  - Դեղատուփ
  - Մեքենաների շարժման գլխավոր ուղիքունը
  - Տարածքի սիեմայի վահանակ
  - Հավաորիմային վահանակ
  - Ժամանակավոր ջրագիծ
  - Գործիքների արկղ
  - Շեպեր




**ՇՈՒՄՈՒՄՈՒՄԱՆ ԻՆՎԵՍՏԱՄԵՆՏ**

ԱԿ	ՄԱՍՆԱԿԱՆ	ՉՈՒՄՈՒՄ	ՍԵՐԱ	ՄԵՏՐԱՅԻՆ
1	ԴՐՈՎԱԳ	2	3	4
2	ԿՐԻՍՏՈՒՄ	2.5	6	24.3
3	ՇՆՆԱԿԱՆԱԿՆԵՐ	2.7	6	24.3
4	ՄԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	2.7	6	24.3
5	ՍՆՆԱԿԱՆ ՊԵՆՏԱՆ	2.7	6	24.3
6	ՊԵՆՏԱՆ	2.7	6	24.3

- ԱՆՎՏԱՆՎՈՒԹՅԱՆ ԵՇԱՆՆԵՐ**
- ՄՐՔԵՆՈՒՄ ԵՆԵՐ
  - ՎՏԱՆՎՈՒԹՅՈՒՆ
  - ՀԱՄԱՆՈՒՄ ԵՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ
  - ՄՐՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆՎՈՒԹՅՈՒՆ
  - ԿՈՆՏՐՈՒՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

Կատարող



0025 Հայաստանի Հանրապետություն  
 ք. Երևան, Չարենցի 1  
 էլ. փոստ info@zaynproject.am

Պատվիրատու

ՀՀ ԶՄԱՐԱՄԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Նախագիծի անվանումը

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՍԱՐԶԻ ԴԻՆԻՑԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
 ԳՈՇ ԳՅՈՒՂԻՉՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ/ՏԵՂ  
 ՀՅՈՒՄԻՑՅԱՆ ԿՐԻՍՏԱՄԱՆԻՆ ԼՈՒՍԱԳԻՇ

Փուլ	Սաա	Այլըմ	Գիրք	Հատող
ԱՆ	ՇԿ			

Գծագրի անվանում

ՇԻՆՈՒՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱՎՈՐԻՇ  
 ԴՐՈՎԱԳ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

Գծագիր ՇԿ-02

Էլ. ֆայլ

Մասշտաբ

1:200

Կատարող բաժնի անվանումը

Մ. Ֆարսյանի ճարտարապետական արվեստանոց

ՆԳՃ	Ֆարսյան Մ.
ՆԳԻ	Ֆանունց Ա.
Բաժ. ղեկ.	Ֆարսյան Մ.
Գլխ. կանստր.	Սողոմոնյան Հ.
Նախագծից	Դուլյան Ա.

Պատվիր ԳՅՈՒՂ-ՀԱՄԱՆՈՒՄ-24/59


անսարքվ	արվելի. համար	գր.յթախամար

Փոփոխություններ

3		
2		
1		
0		
Էջ	Գործնատ	A1

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Կառուցվող դարոց եզրագիծ
-  Ընթացիկ փուլերով կառուցվող շինություններ
-  Տարածքի սահմանը
-  Ժամանակավոր ցանկապատ
-  Պարպաս
-  Կոմեյներ(վազոն)
-  Ամրվների վազոնան կետ
-  Ժամանակավոր ճանապարհ
-  Բաց պահեստ
-  Ժամանակավոր ծածկարան
-  Օդով անցնող ժամանակավոր էլեկտրական ծաղուխ
-  Լուսարձակ
-  Հակահրդեհային հիդրանտ
-  Ժամանակավոր բիրդպարան
-  Սննդի ընդունման կետ
-  Դեղատուփ
-  Մեքենաների շարժման գլխավոր ուղղությունը
-  Տարածքի սիեմայի վահանակ
-  Հակահրդեհային վահանակ
-  Ժամանակավոր ջրագիծ
-  Գործիքների արդ




ԸՆԿՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՆՈՒՄ

ԸԸ	ՆԱԿԱՆՈՒՄ	ՕՐՈՇՈՒՄ	ԵՄԿ	ՄԵՏՈՒՄ
1	ԳՆԱԿԱՆՈՒՄ	2	3	4
2	ԿԱՐԳԱՆՈՒՄ	2,7	9	24,3
3	ՎՈՒՄԱՐՁՄԱՆ	2,7	9	24,3
4	ՍՆՆՈՒՄ ԵՎ ՍՆՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ	2,7	9	24,3
5	ՍՆՆՈՒՄ ԵՎ ՍՆՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ	2,7	9	24,3
6	ՍՆՆՈՒՄ	2,7	9	24,3

- ՍՆՆՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՆՈՒՄ
-  ԱՊՐԱՆՈՒՄ
  -  ԿԱՐԳԱՆՈՒՄ
  -  ԿԱՐԳԱՆՈՒՄ
  -  ԱՊՐԱՆՈՒՄ
  -  ԱՊՐԱՆՈՒՄ

Կատարող



0025 Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան, Չարենցի 1  
Էլ. փոստ info@armproject.am

Պատվիրատու

ՀՀ ԲԱՄԱՐՁՄԱՆ ԿՈՄԻՏԵ

Նախագծի անվանումը

ՀՀ ՏՆԱԿՈՒՄԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԳՅՈՒԴԻ 200 ԱՇԿԵՐՍ/ՏԵՂ ԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿՈՅՆԱՐՁՄԱՆ ԿԱԶՄԱՆՈՒՄ

Փուլ	Սաա	Այրմ	Գիրք	Հաստք
ԱՆ	ՇԿ			

Գծագրի անվանում




ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գծագիր ՇԿ-03

Էլ. Ֆայլ

Մասշտաբ 1:200

Կատարող ըստնի անվանումը  
Մ. Ֆարսյանի ճարտարապետական արվեստանոց

ԼԳԾ		Ֆարսյան Մ.
ԼԳԻ		Ջանունց Ա.
Բաժ. ղեկ.		Ֆարսյան Մ.
Գլխ. կանադր.		Սողոմոնյան Հ.
Նախագծեց		Պուլյան Ա.

Պատվեր ՅՔԿ-ՀԱՄԱՆՕՇԻ-24/59

Ամսաթիվ	արխիվ, համար	գրություն

Փոփոխություններ

3		
2		
1		
0		
12	Ֆորմատ	A1



### 1.5.7 *Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ*

Ջրամատակարարման և ջրահեռացման մասի նախագիծը իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը: Որպես ելակետային տվյալներ ծառայել են ճարտարապետական հատակագծերը, գլխավոր հատակագիծը և տեղանքի գեոդեզիական հանույթը: Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են՝

1. Ն 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում:

2. ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն: Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում

- Տաք ջրամատակարարում:

- Հրդեհամարման համակարգ

- Կենցաղային կոյուղի:

#### **Ջրամատակարարում**

Նախատեսվող դպրոցի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել համայնքային ցանցից, ստանալով համապատասխան թույլտվություններ:

Նախագծվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից  $2 \times (1.8 \times 4.45 \times 2.25 \text{մ})$   $W=18.0 \text{մ}^3$ , որոնց կից տեղադրվում է պոմպային համակարգ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, իսկ մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում Wis SBoost Smart 4 HelixVE 404,  $Q=5,0 \text{լ/վրկ}$ ,  $H=30.00$ ,  $N4 \times 0.75 \text{կՎտ}$ , 3- 400V:

Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով: Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված կանանց: Տաք ջրամատակարարման համակարգի նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմամեկուսացվում են 100մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

#### **Հրդեհամարման համակարգ**

Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ  $2.5 \text{լ/վրկ}$  ելքով: Համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված ռեզերվուարներից  $2 \times (1.8 \times 4.45 \times 2.25 \text{մ})$   $W=18.00$ , որոնցում առկա է հրդեհամարման անհրաժեշտ ծավալը:

Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա էլ-եռակցման 076x3մմ և 057x3մմ տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից: Հրշեջ պահարանները համալրված են հրշեջ ծորակներով և 120,0մ երկարության փողրակներով:

## **Կենցաղային կոյուղի**

Կենցաղային կոյուղու ցանցը ինքնահոս է: Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC O50 և O110մմ խողովակներով: Քիմիայի լաբորատորիայի կոյուղին բակային ցանցին է միանում առանձին համակրոգով և միանալուց առաջ անցնում է չեզոքացնող բաքով հետևյալ տեսակի՝ Viking VP6BG-250 712x1000x836:

Նախատեսվող կոյուղագիծը միանում է տարածքում նոր կառուցվող կոյուղու մաքրման Topac 100 սարքավորմանը:

Սարքավորումը կատարում է եռաստիճան մաքրում՝ մաքրված կեղտաջրերի բնութագրերն են՝ ԹԿՊ20 - 10-20մգ/լ - ի սահմաններում, ԹՔՊ - 70-100մգ/լ -ի սահմաններում, N և NH4 իոնների պարունակությունը 15-20մգ/լ – ի սահմաններում:

Նախագծով նախատեսվում է խրամուղու նախապատրաստական շերտ ավազից 10սմ հաստությամբ, ետլիցք ավազով ձեռքով 0.1մ շերտ առ շերտ տոփանումով d+200մմ, և վերջնական ետլիցք տեղի բնահողից:

Բոլոր համակարգերը մոնտաժից հետո ենթակա են հիդրավիկական փորձարկման՝ համաձայն գործող նորմերի:

### **- Ոռոգման համակարգ՝**

Ոռոգման համակարգը սնվում է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորուման միջոցով մաքրված ջուրը: Ջուրը ջրասույզ պոմպի (Гном 16-16)-ի միջոցով մղվում է ոռոգման համակարգ:

Ավելցուկային ջրերի հեռացման համար նախատեսված է դրենաժային հորատանցք 15.0մ խորությամբ Ø160մմ, որի մեջ տեղադրվում է պոլիէթիլենային խողովակ: Խողովակի վրա անհրաժեշտ է բացել անցքեր Ø20մմ տրամագծով, յուրաքանչյուր 1 գծամետրի վրա, թվով 10 հատ:

## **1.5.8 Ջեռուցում, հովացում և օդափոխություն**

### ***Ջեռուցում***

Մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ, համընթաց շարժումով:

Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ռադիատորներ բացառությամբ սպորտսրահից որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

Սենյակների ներսի օդի ջերմաստիճանները ընդունված են համաձայն գործող նորմերի:

Օղի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով:

Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավիկ փորձարկման, որից հետո կատարում են խողովակների փչամաքրում:

Համակարգերից ջրի դատարկումը կատարվում է կաթսայատնից:

### ***Օդափոխություն***

Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով՝

-Մեխանիկական ներածման և արտածման օդափոխություն նախատեսված է նկուղային հարկից (Ն1,Ա1), ճաշասրահից (Ն2,Ա2), սպորտային դահլիճից (Ն3,Ա3) , հանդիսությունների դահլիճից (Ն4,Ա4), քիմիայի և կենսաբանության դասասենյակից (Ն5,Ա5) : Մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի համակարգերը աշխատում են պարբերաբար ըստ պահանջի:

Դասարանների և կաբինետների համար նախատեսված է ներածման -արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրված են դասասենյակի արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով:

Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը: Որպեսզի աշխատող օդափոխիչներից բացառել աղմուկի տարածումը, ներածման և արտածման օդատարների վրա, օդափոխիչից հետո, նախատեսված են աղմկախլացուցիչներ:

Քիմիայի կաբինետի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական արտածում (Ա3): Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է Ն5 ներածման համակարգ: Սենյակներում ներածման և արտածման օդաքանակները հաշված են համաձայն գործող նորմերի:

Ինքնուրույն արտածման համակարգ մեխանիկական դրդմամբ նախատեսված է սան հանգույցներից կանալային օդափոխիչներով: Ընդհանուր օդափոխության օդաքանակները որոշված են համաձայն СНИП 2.08.02.-89\*:

Բոլոր օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից, որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում, իսկ սպորտային դահլիճի համար ընտրված են դեկորատիվ օդատարներ:

Ներածման – արտածման սարքերի օդատարները մեկուսացվում են ինքնակայուն մեկուսիչով  $\delta=5$ մմ բացարության մեկուսացման համակարգով: Ձեղնահարկում բոլոր օդատարները մեկուսացվում են հանքային քամակով  $\delta=50$ մմ:

### 1.5.9 *Էլեկտրամատակարարում*

Նախագիծը մշակված է համաձայն ПУЭ-99 և ՀՀՇՆ31-03.01-2014 դրույթների:

Դպրոցի էլ մատակարարումը իրականացվում է 400կՎԱ հզորությամբ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանից:

Ըստ էլ.մատակարարման հուսալիության աստիճանի շենքի հոսանքասպառիչները դասվում են 2 կարգի: Դպրոցի սնուցումը իրականացվում է 2 մալուխային գծերով:

Էլ.լուսավորությունը նախատեսված է հետևյալ տեսակների՝ 1. աշխատանքային 2. վրարային- էվակուացիոն Բաշխիչ վահանից տարված են սնող գծեր դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով: Խմբային ցանցը նախատեսված է ВВГнг-LS մակնիշի մալուխով ճկուն խողովակների մեջ:

Անջատիչները և վարդակները դասասենյակներում և այն վայրերում, որտեղ գտնվում են երեխաները, տեղադրվում են հատակից 1.8մ բարձրության վրա, այլ սենյակներում՝ հատակից 0.8մ, վահանակները՝ 1.5մ բարձրության վրա հատուկ պատրաստված խորշերի մեջ:

Բոլոր լուսատուների և վարդակների սնուցումը իրականացնել 3 հաղորդալարերով, նեռարյալ PE հաղորդալարը: Հրդեհի դեպքում նախատեսված է օդափոխության ամբողջ համակարգի անջատում:

Հողանցման և անվտանգության պաշտպանական միջոցներ: Նախագծով ընդունված է TN-C-S համակարգը: Որպես պաշտանիչ միջոց նախատեսված է իրականացնել հողանցման օջախ 4 Օհմ դիմադրությամբ: Շենքի անվտանգությունը ապահովելու համար կիրառվում են համալիր միջոցներ՝ Էլ.էներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում կատարվում է հինգ հաղորդալարով (L1,L2,L3,N,PE), միաֆազ ցանցում երեք հաղորդալարով (L1,N,PE), անցկացնելով առանձին PE հաղորդալարը, սկսած մուտքի վահանից: Բոլոր էլ.մոնտաժային աշխատանքները կատարել համաձայն գործող էլեկտրատեխնիկական կանոնների և նորմերի:

### 1.5.10 Արևային ֆոտովոլտային համակարգ

Դպրոցին պատկանող տարածքում 149.6 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի նախագծման համար հիմք են հանդիսացել.

1. Տեղանքի հատակագծերը
2. Տեղագնման արդյունքները
3. Տեխնիկական առաջադրանքը

Նախագծով նախատեսվում է 149.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում, որի տարածքը կտրամադրվի համայնքի կողմից:

Տեղանքում հորիզոնական ճառագայթումը  $\approx 1337$  կՎտ\*ժ/մ<sup>2</sup> է: Տարվա մեջ անարև օրերի քանակը 63 օր է: Առավելագույն դրական և բացասական ջերմաստիճանները համապատասխանաբար 35°C և -20°C է: Օրվա մեջ առավելագույն տեղումները (ձյուն) 65 մմ է: Քամին Հարավ-արևելյան է: 20 տարվա մեջ 1 անգամ հնարավոր քամու առավելագույն արագությունը 34 մ/վ է:

ՖՎ վահանակները տեղակայվելու են գրունտային մակերևույթին՝ դեպի հարավ ուղղորդված, 30° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 272 հատ միաբյուրեղային 144 (6x24) կետքիչներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք միանում են փոխակերպիչների ԱՀԿՈԻ 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական էլքային հզորությունը 50 կՎտ է /Եռաֆազ/:

ՖՎ կայանի հենակառուցվածքը մոնտաժվում է նախապես կառուցված երկաթ-բետոնային հիմքերի վրա՝ զոդման միջոցով: ՖՎ կայանի հենակառուցվածքը կազմված է հակակոռոզիոն ներկով պատված պողպատե խողովակներից:

Փոխակերպիչը և ՓՀՀՏ-ն տեղադրվում են հենակառուցվածքի վրա հատկացված հատվածում: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն ենթակայանից սնվող մալուխով էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները մոնտաժվում են հենակառուցվածքի վրա ձգման, իսկ շարքից շարք խրամուղով անցկացման եղանակով: Խրամուղու մեջ մալուխները անցկացվում են կոյուղու խողովակների մեջ:

ՖՎ կայանի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ:

ՖՎՀ-ի համար կառուցվում է հողանցման կոնտուր: Չափումների արդյունքում դիմադրությունը չպետք է գերազանցի 4 Օհմը, այլապես ավելացնել հողանցիչներ:

## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3 Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4 Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

## 2.1 Շինարարության պայմանները

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է · աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,

Բաջնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85\*՝ “Շինարարության տնտղության և նախակատարման · նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80\*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ՝

### Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,

- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում (անհրաժեշտության դեպքում)
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում (անհրաժեշտության դեպքում),
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

### **Հիմնական փուլ**

Հիմնական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

- հիմնական և օժանդակ օբյեկտների կառուցում,
- ներքին և արտաքին կոմունիկացիաների տեղադրում,
- բարեկարգման աշխատանքներ,
- կանաչապատման աշխատանքներ:

## **2.2 Շինարարության ժամկետները**

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 24 ամիս կամ 624 օրացուցային օր, աշխատակազմի առավելագույն քանակը 49 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

## **2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը**

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Մոբիլային վերամբարձ կոունկ	KC-45717-1 ИВАНОВЕЦ	2 (երկրորդը օժանդակ օբյեկտների զուգահեռ կառուցման նպատակով)
	Հիմնական վերամբարձ մեխանիզմի հնարավոր այլ տարբերակներ	RDK 250 (թրթուրավոր). KC 55713-6 ГАЛИЧАНИН,	
2	Էքսկավատոր կախովի սարքավորումներով	ET-14 ( կամ նմանատիպեր)	1
3	Ավտոբեռնապոմպ	SCHWING S36 SX	1
4	Բուլդոզեր	CAT CS 563 ( կամ նմանատիպեր)	
5	Գլխն	CAT D6R ( կամ նմանատիպեր)	
6	Թրթուիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	2
7	Թրթուիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	4
8	Փոխարկիչ թրթուիչների համար	ИВ-4	2
9	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	2
10	Եռակցման սրանաֆորմատոր	ТД-500	4
11	Տոխանիչներ պնևմոն և ձեռքի		4
12	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	3
13	Հետահար մուրճ		1
14	Ավտոինքնաթափ		Հստ հաշվ.
15	Ավտոբեռնախառնիչ	СБ69Б	Հստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

## 2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է էքսկավատորը, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

### *Հողային աշխատանքներ՝*

*Հանույթ՝ 3000 մ<sup>3</sup>, որից*

*Հետլիցք՝ 1075 մ<sup>3</sup>*

Ավելացած 1925մ<sup>3</sup> հողագրունտը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր:

Հետլիծքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

### 2.4.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ,

մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

**a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

**N**– ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 46 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 624 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 46 \times 0.025) \times 624 = 747.55 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.198 \text{ մ}^3/\text{օր:}$$

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 12500 մ<sup>2</sup>,

**K<sub>1</sub>** – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

$$U_1 = 12500 \times 0.0015 \times 300 = 5625 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 18.75 \text{ մ}^3/\text{օր}$$

**c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>2</sub>** – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 մ<sup>2</sup>,

**K<sub>2</sub>** – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ<sup>3</sup>,

**T** – ժամանակահատվածը օրերով, 450

$$U_2 = 10 \times 0.14 \times 450 = 630 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.4 \text{ մ}^3/\text{օր}$$

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 7002.55 մ<sup>3</sup>/շին. ժամ:**

Բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող դպրոցը սնող ջրագծից:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեգում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադբ:

#### **2.4.2 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը**

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

**Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ**

- Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները , որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապատասխան ակտով:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГООТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ , առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

- Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով ` համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրորի:
- Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:
- Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է գրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը` լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը, պարապ` ընթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:
- Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:
- Փոշու առաջացումից խուսափելու կամ առաջացման ժամանակ այն մարելու համար շինարարական աղբը պետք է թրջել ջրով:
- Բեռնակալիչ հարմարանքները և տարան ( վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:
- Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ ` 200 մ<sup>2</sup> մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:
- Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի , արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում:
- Արգելվում է դիզելային վառելիքի դատարկումը գետնի վրա:

## 2.5 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շինարարական աղբ, ներառյալ քանդման աշխատանքներից առաջացած	IV	9120060101004	2500 մ <sup>3</sup>
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	120մ <sup>3</sup>
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	1925մ <sup>3</sup>
4.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ	IV	35131100 01 00 4	7 մ <sup>3</sup>
5.	Չտեսակավորված այլումինի ջարդոն	V	35310101 01 99 5	3 մ <sup>3</sup>
6.	Ցուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը 15%-ից ավելին/	III	31402303 04 03 3	8 մ <sup>3</sup>
7.	Եռակցման խարամ	IV	31404800 01 99 4	0.1տ

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր /տեղեկանքը կցված է Հավելվածներ բաժնում/:

Դպրոցի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

## 2.6 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների

աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

### **3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ**

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ»:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ազրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում.  
պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատունկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի տեղական ինքնակառավարման մարմիններին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Կանաչապատման նախագծի հիմք են հանդիսանում պատվիրատուի կողմից տրամադրվող գլխավոր հատակագիցը և համայնքապետի կողմից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Ընդհանուր կանաչապատման մակերեսը կազմում է 970.8 քմ:

Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցելով դենդրոլոգների հետ տարածքում տեղադրվել են ստորելվ բերված բույսերի տեսականին համապատասխան քանակներով:

ԹՂԿԻ ՍՐԱՏԵՐԵՎ ԿԱՐՄԻՐ - 15 ՀԱՏ




ԳՆԴԱՁԵՎ ԻԼԵՆԻ - 54 ՀԱՏ

ՍՅՈՒՆԱՁԵՎ ԹՈՒՅԱ - 55 ՀԱՏ

ԲԱՐԴԻ ԱՐԾԱԹԱՓԱՅԼ -56 ՀԱՏ

ՍԻԶԱՄԱՐԳ -1539.28 քՄ

Կանաչապատման սխեման ներկայացված է ստորև:



**ԲԱՅԱՏՐԱԳԻՐ**

200 ՏԵՂԱՆՈՑ ԿՐԹԱԳԱՄԱՒԻՐ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ ՆԱԽՏԵՍՎԱԾ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ 5021.0քմ ՏԱՐԱԾՔ ԶԲՆՈՒՅՑՆՈՂ ԲՅՏԱՌՈՒՄԻ ՄԱՐԶԻ ԴԻՍԻՋՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՈՒՄԻ, ԿԱՆԱԶՄԱՍՏԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵ ԵՆ ՀԱՆԴՐՍԱՑԵԼ ԳԼԱՆԱՌՐ ՀԱՏԱԿԱԳԻՑԸ ԵՎ ԴԱՏՎՈՒՄՈՒ ԿՈՒՄԻՏԵ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՆ ԹՈՒՅԼՎՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՄԱԶԱՅՆ ԿԱՆԱԶՄԱՍՏԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆԱԶՄԱՍՏԱՆ ՄԱԿԵՐԵԱԸ ԿԱԶՄՈՒՄ Է 1539.28քմ:

ՈՒՍՈՒՆԱՄԱՐԵԼՈՎ ՏԵՂԱՆՔԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿԵԼՈՎ ԴԵՆՐՈՒՄՈՒՅԵՐԻ ԴԵՏ ՏԱՐԱԾՅՈՒՄ ՏԵՂԱՐԿԵԼ ԵՆ ԱՏՈՒԿ ԵՐԿՎԱԾ ԲՈՒՅԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՄԱՏԱՆԻՆ ՔԱՆԱԿԵՐՈՎ:

- 1. ԹԵՂԻ ՄՐԿՏԵՐԵՎ ԿԱՐՄԻՐ - 15 հատ
- 2. ԳԼԴԱԶԵՎ ԻԼԵՆԻ - 54 հատ
- 3. ԱՅՈՒՆԱԶԵՎ ԹՈՒՅԱ - 55 հատ
- 4. ԲԱՐԴԻ ԱՐԾԱԹԱՓԱՅԼ - 56 հատ
- 5. ՄԻՋԱՄԱՐԳ - 1539.28քմ

- ԴԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- Ե-3 ԵՐԿԻՊ ԳԱՅՏԱՐԱՅՈՒՐ
  - Ե-1 ՆԱՏԱՐԱՆ ՏԻՊ 1 /1.0x0.5 մ/
  - Ե-2 ՆԱՏԱՐԱՆ ՏԻՊ 2 /1.5x0.5 մ/
  - ԱՐԲԱՄԱՆ

- ՄԱՆՐ ԵՄՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՉԵՎԵՐ**
- Ե-1. ՆԱՏԱՐԱՆ ՏԻՊ-1 - 3 հատ
  - Ե-2. ՆԱՏԱՐԱՆ ՏԻՊ-2 - 13 հատ
  - Ե-3. ԳԱՅՏԱՐԱՅՈՒՐ ԱՐԲԱՄԱՆ - 1 հատ
  - ԱՐԲԱՄԱՆ - 17 հատ

Լուսասեր է, պահանջկոտ չէ հողի նկատմամբ: Բնափայտը սպիտակ է, ամուր և գեղեցիկ նախշերով:

**1 ԹԵՂԻ ՄՐԿՏԵՐԵՎ ԿԱՐՄԻՐ**

Լուսասեր է, ջերմասեր, չափավոր պահանջկոտ հողի և խոնավության նկատմամբ: Տերևները հակառակ են ծված, կամ նեղ էփսած, ունեն 3-7 սմ երկարություն, փայլուն են:

**2 ԳԼԴԱԶԵՎ ԻԼԵՆԻ**

Նոճագիների ընտանիքին պատկանող մշտադալար ասերնատերև ծառատեսակ է, պահանջկոտ է բերրության և խոնավության նկատմամբ: Աճում է հաստատուն գրեթե բոլոր շրջաններում:



**3 ԱՅՈՒՆԱԶԵՎ ԹՈՒՅԱ**

Ո՛ռնագիների ընտանիքին պատկանող տերևաթափ ծառեր են մինչև 30մ բարձրությամբ, 1-1.5մ բնի տրամագծով և լայն ծված կամ վրանածն սաղարթով:

**4 ԲԱՐԴԻ ԱՐԾԱԹԱՓԱՅԼ**

Դողատարածք, որը ծածկված է արհեստական կամ բնական խոտածածկույթով խոտածածկույթ, որը ստեղծված է հատուկ ընտրված սերմերից ցանելով, հաճախ Ֆոն է ծառայում ղեկորատիվ տնկիների և այգիների կառուցման ժամանակահատվածում: Կարող է լինել անհատական կամ կոլեկտիվ հիմնարկային տարր:

**5 ՄԻՋԱՄԱՐԳ**



1ք.մ - ՈՒՄ ՆԱԽՏԵՍՎՈՒՄ Է 0,033 ԿԳ ԽՈՏԻ ԱԵՐՄ ԸՆԴԱՍԵՆԸ - 32.04 ԿԳ

**Կատարող**  
Исполнитель

0025 Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան, Չարենցի 1  
Էլ. փոստ info@amproject.am  
0025 Республика АРМЕНИЯ  
г.Ереван ул. Чаренца 1  
Эл. почта info@amproject.am

Պատվիրատու  
Заказчик

ՀՀ ԲԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
КОМИТЕТ ГРАДОСТРОИТЕЛЬСТВА РА

Նախագծի անվանումը  
ՀՀ ՏԱՌՈՒՄԻ ՄԱՐԶԻ ԴԻՍԻՋՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԳՅՈՒՄԻ 200 ԱՆՎՈՐՆԵՐ/ՏԵՂԵՎ 2 ԽՈՒՄՐ 40 ԱՄՆՎՈՐ ՀՊՈՒԹՅԱՆՍԻՐ ԿՐԹԱԿԱՄԱՐԻ ՆԱԽԱԳԻՑ

Наименование проекта  
Проект общеобразовательного комплекса на 200 учащихся и детсада на 2 группы в селе Гаш общины Дилижан Тавушского марза РА

Փյոն Օպаш	Մասի Հասկ	Այրով Ասծոմ	Գիրք Կնիգ	Հատոր Կոմ
ԱՍ ՄԻ	ԳՀ ՄԻ	1		

Գծագրի անվանում  
Наименование чертежа

**ԿԱՆԱԶՄԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՆՐ ԶԱՐՏ.ՉԵՎԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻՑ**  
ПЛАН ОЗЕЛЕНЕНИЯ И МАЛЫХ АРХ.ФОРМ

Գծագիր ԳՀ - 8 Էլ.Ֆայլ G 100.08  
Շերտեր ԳՄ - 8 Էլ.Ֆայլ G 100.08

Մասշտաբ  
Масштаб 1:500

Կատարող բաժնի անվանումը  
Наименование исполнительного отдела

Մ. Ֆարսյանի ճարտարապետական արվեստանոց  
Архитектурная мастерская М.Фарсяна

ՆԱԶ	Ֆարսյան Մ. Փարսյան Մ.
ԳԱՐ	Ֆարսյան Մ. Փարսյան Մ.
ՆԱԳ	Ջանյուց Ա. Ժանյուց Ա.
ԳՄՍ	Ֆարսյան Մ. Փարսյան Մ.
Քաժ.ղեկ. Փրոեկտոր	Ֆարսյան Մ. Փարսյան Մ.
Գլխ. կոնստր. Գլ. կոնստր.	Սողոմոնյան Հ. Согомонян А.
Նախագծեց Փրոեկտոր	Ֆարսյան Մ. Փարսյան Մ.
Ստուգեց Փրոեկտոր	Ջանյուց Ա. Ժանյուց Ա.

Պատվեր  
Заказ ՀՀԲԿ-ՀՄԱՆՉՐ-24/59

Ամսաթիվ Ժամ	Արժեք, համար Արժ. համար	Գույքահամար Կոմ. համար
	3588	

Փոփոխություններ  
Изменения

1
2
3
4

Էջ 8 Ֆորմատ A 2

### 3.1 Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ռոռզում՝  $n_6 = 0.006$  մ<sup>3</sup>/մ<sup>2</sup>

Ոռռզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝  $S$  – ռոռզվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝  $S_1 = 970.8$  մ<sup>2</sup>,

$K$  – ռոռզման օրական հաճախականությունն է,  $K = 2$

$t$  - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է,  $t = 175$  օր

$$W_{u.3} = (0.006 \times 970.8) \times 2 \times 175 = \underline{\underline{2038.7}} \text{ մ}^3/\text{տարի}$$

#### 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

##### 4.1 Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները

2.1. Գոշ գյուղը Իջևան մարզկենտրոնից գտնվում է 30 կմ հեռավորության վրա, դեպի հարավ-արևմուտք: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է գյուղի կենտրոնական մասում, ներկայիս դպրոցի շենքի տարածքում:

2.2. Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Արեգունու լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան եզրամասի հյուսիսային էրոզիոն-դենուդացիոն լանջերի ստորոտին, Գոշ գետակի հունում, ձախափնյա ակումուլատիվ դարավանդի սահմաններում:

Տեղամասի ռելիեֆը հարթ է, ընդհանուր թեքությամբ արևմուտքից արևելք, մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1099-1104 մ սահմաններում:

2.3. Հողի ստուգման խորությունը՝ 63 սմ /Դիլիջան/:

2.4. Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է պլեոցենի հասակի հրաբխա-նստվածքային հաստվածքով՝ տուֆավազաքարերով, ավազաքարերով, մերգելներով, պորֆիրիտներով, տուֆերով, տուֆաբեկչիաներով, որոնք ծածկված են ժամանակակից էլուվիալ, էլուվիալ-դելուվիալ, դելուվիալ-պրոլուվիալ գոյացումներով:

2.5. Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը վերևից-ներքև ներկայացված է հետևյալ գրունտների շերտերով (տես լիթոլոգիական կտրվածքները).

Շերտ1 – լիրքագրունտ խճա-խճավազային նիճա-ավազակավային, ավազի յցակոթով, տեղ-տեղ ասֆալտաբետոնի ծածկոյթով, 0.4-1.5 մ հզորությամբ:

Շերտ2 – ավազակավ շագանակագույն և դարչնագույն, կարմրավուն երանգով, մանր խճով ու խճավազով 10-25%, սակավխոնավ և խոնավ, կիսակոշտ և ձիգալլաստիկ: Շերտը տեղամասում համատարած չէ, 0.4-0,8 մ հզորությամբ: Ժամանակակից դելուվիալ-պրոլուվիալ գոյացումներ:

Շերտ3 – կավ դարչնագույն և շագանակագույն, տարբեր երանգներով՝ մոխրագույն, կարմրավուն, դեղնա-մոխրա-կանաչավուն, օխրայացած բնիկներով, մանր խճով ու խճավազով 15-30%, առանձին միջակայքերում՝ խճային ոսպնյակներով, տեղ-տեղ մանր ավազի բարակ նրբաշերտերով /3-5 սմ/, խոնավ, ձիգալլաստիկ ու կիսակոշտ: Շերտը տեղամասում համատարած է, 10.1 մ բացված հզորությամբ:

Ժամանակակից դելուվիալ-պրոլուվիալ գոյացումներ:

##### 4.2 Կլիմայական պայմանները

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի՝ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի տարածքի համար

բնութագրական են հետևյալ կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «տաք» կլիմայական շրջանում:

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Իջևան	1.1	1.9	5.2	10.5	15.0	18.8	21.9	21.8	17.6	12.1	6.8	3.0	11.3	-18.5	39.0

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամառային ժամը 15-ին	Միջին ամառային ժամը 15-ին		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Իջևան	69	69	71	72	75	72	69	68	73	77	75	70	72	69	62	69	53

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ամսական տեղումների քանակը, մմ													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների													Սառվելագույնտանալու արդյունքը, սմ	Տարվա մեջծնածուկույթների քանակը	Չյան մեջջրիառակույթը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Իջևան	22	30	45	63	100	98	58	39	40	47	36	22	600	33	37	65
	28	31	29	41	46	63	92	71	41	46	32	24	92			

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անորոշի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագությունները նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Սիջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ - արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս - արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Իջևան	հունվար	28	2	1	2	54	10	2	1	28	2.8	չվ	1.2	չվ	3.4
		1.4	1.2	1.4	3.4	3.4	3.1	2.5	1.4						
	ապրիլ	44	3	2	2	38	7	2	2	21	2.0				
		1.9	1.8	1.4	1.9	2.0	2.1	2.1	1.9						
	հուլիս	39	3	2	2	41	8	3	2	21	1.9				
		2.0	1.9	1.4	1.6	1.2	1.5	1.4	2.1						
	հոկտեմբեր	36	3	2	2	46	8	1	2	27	1.8				
		1.6	1.6	1.0	1.5	1.7	2.1	1.8	1.5						

### 4.3 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օդոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Գոշ բնակավայրում /բնակչություն՝ 1115/ չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում սովյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ<sup>3</sup>;

- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ<sup>3</sup>:

#### 4.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Ուսումնասիրվող տարածքը պատկանում է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքին:

Մակերևութային ջրեր

2024 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում. այդ թվում՝ 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ (առկայության դեպքում), ջրի էլքի չափումներ): 59 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով ստացվում են տվյալներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ: 2024 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 45 գետի, Արփի լիճ, Ապարանի, Ազատի, Երևանյան լիճ և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարերի և Սևանա լճի 22 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ֆիզիկաքիմիական ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ. սնուցող նյութեր. ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ֆիզիկաքիմիական յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»: Ջրամբարներում ջրի որակի գնահատումը կատարվում է միայն սնուցող նյութերով:

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերից որոշների ջրի էլքերի միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր. մ <sup>3</sup> /վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Թումանյան	8.68	6.75	129	6.14	6.94	88	5.22	5.61	93
Դեբեդ	Այրում	26.3	19.8	133	20.5	20.5	100	18.3	16.4	112
Չորագետ	Գարգառ	11.2	9.90	113	8.36	9.96	84	7.29	8.01	91
Աղստև	Իջևան	8.15	5.21	156	4.36	5.11	85	3.82	3.67	104
Գետիկ	Գոշ	3.69	1.83	202	1.40	1.73	81	0.87	1.18	74

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև՝ հոկտեմբերին «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» որակ (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև և Այրում քաղաքից վերև հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), սահմանի մոտ հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հոկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Սարատովկա գյուղից ներքև՝ հոկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գարգառ գետի ջրի որակը ակունքում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Շնող գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին և դեկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

#### **4.5 Հողածածկ**

Համաձայն ՀՀ հողերի ծածկույթի քարտեզի ծրագրի տարածքը գտնվում է կիսա - անապատային գոտու սահմաններում, որտեղ տարածված են լեռնա - անտառային դարչնագույն հողատեսակներ: Անտառային դարչնագույն հողերի տիպը կազմում են Հայաստանի հողային ֆոնդի 21.6% - ը: Տարածված են Լալվար-Լեջանի, Գուգարքի, Բագումի, Իջևանի, Նոյեմբերյանի տարածաշրջանում, Զանգեզուրում և Արագածի արևելյան լանջերին: Լեռնա-անտառային գոտու դարչնագույն հողերը տարածված են 700-1500մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոստրակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Անտառների ոչնչացման հետ կապված այս հողերի զգալի մասն օգտագործվում է որպես վարելահող հացահատիկների, պտուղ-բանջարեղենի մշակման նպատակներով կամ որպես խոտհարք:

Հումիինային նյութերում հումիինաթթուների և ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է: Այս տիպի հողերն ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով: Աաղյուսակում ներկայացվում է դարչնագույն անտառային հողերի ֆիզիկաքիմիական հատկությունները (աղ.8): Նոյեմբերյանի տարածաշրջանում հիմնականում անտառային դարչնագույն տիպի մնացորդային կարբոնատային տափաստանացված, կավ-ավազային, ավազակավային և կավա-կարբոնատային ենթատիպերով հողեր են: Հիմնականում տարածված են թեթև և միջակ կավավազային մեխանիկական կազմ ունեցող տեսակները: Շրջանի երկրաբանական և լիթոլոգիական կտրվածքի վերին մասը ներկայացված է էյուվիալ, այուրիվիլ, դեյուվիալ և պրովիլիալ նստվածքներով, որոնք ծածկում են կրաքարերի, ավազային և կավային կրաքարերի, մերգելների, ցեոլիտացված և բենտոնիտացված անդեզիտային պոֆիրիտների, տուֆերի և տուֆափշրաքարերի հաստվածքները:

#### **4.6 Կենսաբազմազանություն**

Այս բաժնում ներկայացվող նյութը կազմված է շրջանի կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ հասանաելի գիտական հրապարակումների, ինչպես նաև դաշտային այցելությունների ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

##### **4.6.1 Բուսական աշխարհ**

Հայցվող տեղամասը ամբողջությամբ մտնում է Իջևանի ֆլորիստական շրջանի մեջ, որտեղ հիմնական բուսական տիպը անտառայինն է: Անհամեմատ փոքր տարածքներ են զբաղեցնում չոր, նոսր անտառները և ենթալպյան համակեցությունները:

Անտառ կազմող գլխավոր ծառատեսակներն են արևելյան հաճարենին, արևելյան և վրացական կաղնին, բոխին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են դաժին, լորին, հացին, սրատերև և դաշտային թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառուտների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր փոքր ծառուտներ:

Ցածր լեռնային գոտում (մինչև 1000մ) անտառային բուսականությունը ներկայացված է դաժու շիվային ծագման ծառուտներով, իսկ անտառի կազմում զգալի մասնակցություն ունեն վրացական կաղնին, սրապտուղ և սովորական հացին, վրացական և դաշտային թխկին և տերևաշատ թեղին:

Թփերից հանդիպում են հոնին, սզնին (նկ.12), մասրենին, զկռենին (նկ.13), մոշենին և այլն:

Ղաժու համակեցություններն ըստ էության ածանցյալ են, ունեն երկրորդական ծագում և փոխարինել են անցյալում հատված կաղնու անտառներին:

Հարավային լեռնալանջերում հանդիպում են գիհու նոսր անտառներ, որտեղ գիհու հետ միասին աճում են փոշնի, դժնիկ և այլ չորադիմացկուն տեսակներ: Այստեղ 700 մ-ից մինչև 1400մ բարձրություններում փոքր խմբերով կամ առանձին ծառերի ձևով աճում է ընկուզենի:

Շրջանի բուսածածկը հիմնականում ներկայացված է անտառային լայնատերև և քսերոֆիլ նոսրանտառային բուսականությամբ, սահմանափակ տարածում ունի բուսականության ենթաալպյան մարգագետնային տիպը (նկ. 14):

Հանդիպում են Բանգի սև (*Hyoscyamus niger*), Եղինջ երկտուն (*Utrica dioica*), Երեքնուկ կարմիր, Երեքնուկ սողացող (*Trifolium hybridum*, *Trifolium repens*), Իշաովույտ դեղատու (*Melilotus officinalis*), Խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis*), Ծոսապաշար սովորական (*Capsella bursa pastoris*):

Վայրի օգտակար բուսատեսակներից տեղանքում հանդիպում է Խնկածաղիկ սովորականը (*Origanum vulgare*):



Նկ.12: Սզնի



Նկ. 13: Զկռենի



Նկար 14: ՀՀ Տավուշի մարզի բնական բուսածածկի տիպերի սխեմատիկ քարտեզ: 1-քսերոֆիլ նոսրանտառային բուսականություն - սաղարթավոր խառը, մասնակցությամբ *Paliurus spinachristi* Mill., *Spiraea crenata* L., *Amugdalu fenziiana* (Fritsch) Lipsky, *Pistacia nutica* Fisch. et Mey. *Celtis glabrata* Stev. Ex Planch., *Cerasus incana* (Pall.) Spach, *Pyrus salicifolia* Pall., 2- Սնտառային բուսականություն - Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճարենու (*Fagus orientalis* Lipsky), կաղնու (*Quercus iberica* Stev. *Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen), բոխու (*Carpinus betuius* L., *C. orientalis* Mill), հաղենու (*Fraxinus excelsior* L.), լոբենու (*Tilia begoniifolia* Stev.)[33]:

Շիրյակը (նկ. 15) տարածված է ստորին լեռնային գոտում, զբաղեցնում է տարածքի մեծ մասը, որտեղ էդիֆիկատոր է հանդիսանում Ցաքին (*Paliurus spina Christi* Mill): Ցաքու հետ հանդիպում են նաև այլ թփեր՝ Ցախակեռասը կովկասյան (*Lonicera caucasica* Pall.), Դժնիկը Պալասի (*Rhamnus pallasii* Fisch., et Mey.), Ասպիրակը աղեղնաեզր (*Spiraea crenata* L.), Հասմիկը թփուտային (*Jasminum fruticans* L.), Էֆեդրան լեռնային (Սարի չամիչ)(*Ephedra procera*):

Խոտածածկը բազմազան է, հանդիպում են Ողկուզակ կովկասյան (*Dictamnus albus* L subsp. *caucasicus* (Fisch. Et C. A. Mey.), Մակարդախոտը (նկ.16, *Galium verum* L.,) Կաթնախոտը անատոլիական (*Polygala anatolica*), Լերդախոտը ալեհեր (*Teucrium polium* L. ), Հազարատերևուկը սովորական (*Alchemilla millefolium* L.), Ավելուկ սովորականը (*Rumex acetosa* L.), Թխակակաչ եղջրավորը (*Glaucium corniculatum* (L.) Curt.) և այլն:



Նկ.15: Շիրբյակ:



Նկ.156 Մակարդախոտ

**Փետրախոտա-տարախոտային** տափաստանի հատվածում հանդիպում են Փրփրուկ տափաստանայինը (*Filipendula hexapetalaa* Gilib.), Պնակախոտ արևելյանը (*Scutellaria orientalis* L. ), Քարառվույտ երփներանգը (*Coronilla varia*), Քոսքոսուկը (*Scabiosa*), Գազը (*Astragalus* sp. ), Բավեղը պալարավոր (*Phlomis toberosa* L.), Բավեղը փշոտ (*Phlomis pungens* Willd.), Սիբեխ սովորականը (*Falcaria vulgaris* Bernh.), Անմոռուկ դաշտայինը (*Myosotis arvensis* (L.) Hill.), Երեքնուկ վարելահողայինը (*Trifolium arvense* L.) և այլն:

**Հացահատիկա-տարախոտային** հատվածում գերիշխում է Ցորնուկը (*Bromus*): Հանդիպում են նաև Ուրցը կոչիի, (*Thymus kotchianus*), Ուրցադաղձը ռեհանաուրցանման (*Ziziphota clinopodioides*), Ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), *Poa nemoralis* (Դաշտավլուկ կաղնութային), Երեքնուկ սողացող (*Trifolium repens* L.), Առվույտ ցանովի (*Medicago sativa*), Դաշտավլուկ կաղնուտային (*Poa nemoralis*), Մարգարտախոտ միածաղիկը (*Melica uniflora* Retz.), Ցորնուկ ճապոնականը (*Bromus japonicus*), Հազարատերևուկ սովորականը (*Achillea millefolium*), Պատատուկ դաշտայինը (*Convolvulus arvensis*):

**Չորակներում** մնացորդային լայնատերև նոսրանտառի կղզյակներ են, մասնակցությամբ՝ մապենու (*Rosa canina*), Հացենու սովորական (*Fraxinus excelsior*), Գերիմաստու (*Viburnum lantana*), Ասպիրակի աղեղնաեզր (*Spiraea crenata* L.), Պիստակենու (*Pistacea mutica*), Ճապկիի հարավի (*Swida australis*) և այլն:

Հայցվող տարածքում, որտեղ իրականացվելու են հետախուզական աշխատանքներ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվում է արդեն իսկ կառուցապատված միջավայրում, բնապահպանական միջոցառումների չի նախատեսվում իրականացնել:

#### 4.6.2 Կենդանական աշխարհ

Շրջանի կենդանական աշխարհը ներկայացված է Կովկասյան լայնատերև անտառներին բնորոշ տեսակներով: Այս գոտում գրանցված են երկկենցաղների 1, սողունների 4, թռչունների 84 և կաթնասունների 24 տեսակներ: Հանդիպում են այծյամներ, գորշ արջ, վայրի խոզ, գայլ, աղվես, փոքրսուղ, նապաստակ, կզաքիս, չախկալ, ոզնի, սկյուռ, անտառային կատու, դաշտամուկ, սողունների, երկկենցաղների, թռչունների, միջատների և բզեզների տեսակներ, իսկ ձկներից բնորոշ են կարմրախայտ, մուրծի, բեղլու և այլ տեսակներ (Դեբեդ և Կուր գետերում):

Գրականության և դաշտային այցելությունների ընթացքում հավաքված տվյալների հիման վրա ստորև ներկայացվում է շրջանում հանդիպող կենդանական աշխարհի ներկայացուցիչների ցանկը:

#### Կաթնասուններ

1. Գայլ-*Canis lupus*:
2. Շնագայլ –*Canis aureus*:
3. Աղվես – *Vulpes vulpes*:
4. Կզաքիս –*Martes foina*:
5. Նապաստակ - *Lepus europaeus*: Պարբերաբար գրանցվել է շահագործման ենթակա և հարակից տարածքներում:
6. Սովորական դաշտամուկ – *Microtus arvalis*:
7. Անտառային մուկ –*Apodemus sylvaticus*:
8. Թփուտային դաշտամուկ – *Microtus majori*:

#### Թռչուններ-Aves

1. Մեծ ճուռակ- *Buteo buteo*:
2. Տափաստյին ճուռակ- *buteo rufus*
3. Լորաճուռակ -*Accipiter nisus* :
4. Սովորական հողմավար բազե- *Falco naumanni* :
5. Անտառային աղավնի – *Columba palumbus*:
6. Սովորական կկու-*Coccyus canorus*:
7. Այծկիթ –*Caprimulgus europaeus*:
8. Ոսկեգույն մեղվակեր – *Merops apiaster*:
9. Հոպոպ –*Upupa epops*:
10. Խայտաբղետ փայտփոր – *Dendrocopos medius*:
11. Անտառային արտույտ – *Lullula arborea*:
12. Գյուղական ծիծեռնակ- *Hirunda rustica*:
13. Քաղաքային ծիծեռնակ –*Delichea urbana*:
14. Սպիտակ խաղտոնիկ – *Motacilla alba*:
15. Մարգագետնային ձիաթռչնակ – *Anthus pratensis*:
16. Ժուլան –*Lamius colluria*:
17. Արշալուսիկ –*Erithacus rubecula*:
18. Սովորական կարմրատուտ –*Phoenicurus phoenicurus*:
19. Մարգագետնային չքչքան –*Saxicola rubetra*:
20. Սև կեռնեխ –*Turdus merula*:
21. Ծնկլտան գեղեցիկ-*Phylloscopus collybita*:
22. Մեծ երաժշտահավ -*Parus major*:
23. Լեռնային դրախտապան-*Emberiza cia*:
24. Սևագլուխ դրախտապան-*Emberiza melanociphola*:
25. Ամուրիկ – *Fringilla coelebs*:
26. Կանաչ սերինոս –*Carduelis chloris*:
27. Կարմրակատար –*Carduelis carduelis*:
28. Սովորական կաշաղակ –*Pica pica*:

## Սողուններ/Reptilia/ և երկկենցաղներ /Amphibia/

1. Ագամա-Agama caucasica:
2. Շերտավոր մողես-Lacerta strigata:
3. Պղնձօձ-Coronella austriaca:
4. Ժայռային մողես-Darevskia raddei
5. Կանաչ դողող-Bifo viridis:

Կառուցապատման ենթակա տարածքում ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվում է արդեն իսկ կառուցապատված միջավայրում, բնապահպանական միջոցառումների չի նախատեսվում իրականացնել:

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշումների՝ Լոռու (Սարչապատ գյուղի շրջակայք) և Իջևանի (Բագրատաշեն, Քոբայր, Այրում, Ախթալա, Դեբեդ գյուղերի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում հանդիպում է Խոնդատ մուգ մանուշակագույն *Verbascum\_atroviolaceum*\_(Sommier et Levier) Murb.) վտանգված բուսատեսակը: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 400-1400 մ բարձրությունների վրա. տափաստանացած լանջերին, շիբլակում: Իջևանի (Բագրատաշենի շրջակայք) և Մեղրու (Ագարակի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում հանդիպում է Գնկոր նրբագեղ (*Aira\_elegantissima* Schur) վտանգված բուսատեսակը: Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 400-1000մ բարձրությունների վրա. ավազոտ տեղերում, քարքարոտ լանջերին, շիբլակում և նոսրանտառներում: Տավուշի մարզից (Բագրատաշեն գ. շրջակայք) հայտնի է Սողոպոչ անդրկովկասյան (*Poecilimon geoktshaicus* Stshelkanovtsev) վտանգված կենդանատեսակը:

### **4.7 Բնական և մշակութային ժառանգություն**

Բնական ժառանգության, որպես տուրիզմի և ռեկրեացիայի ռեսուրս, անկրկնելի օբյեկտներ են հանդիսանում Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարկուտները, Խաչարձանի կաղնուտները, Պարզ և Գոշ լճերը:

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում, ըստ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1929-Ն որոշմամբ հաստատված պատմամշակութային հուշարձանների պետական ցուցակի, հաշվառված է 473 հուշարձան: Դիլիջան՝ ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում ցուցաբերվել է ընդհանրացված մոտեցում, որի դեպքում առանձին հուշարձաններ միավորվել են խմբերի մեջ: Այսպես, օրինակ՝ Դիլիջան քաղաքի վարչական տարածքում, ըստ վերը նշված ցուցակի, առկա է 72 ազգագրական բնակելի տուն, իսկ կառավարման պլանում դրանք խմբավորված են մեկ թաղամասում: Նույն մոտեցման արդյունքում 473 հաշվառված հուշարձանների փոխարեն ստացվել է 257, որը հուշարձանների պահպանության և շահագործման տեսակետից առավել կառավարելի է: Համաձայն այս մոտեցման՝ Դիլիջան՝ ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում առկա պատմության և մշակույթի հուշարձանները, այդ թվում՝ բնական հուշարձանները, դասակարգվում են<sup>a</sup> 2 բնական հուշարձան, 3 քարեդարյան հնավայր, 9 քարայր կացարան, 8 քաղաքատեղի, 51 գյուղատեղի,

2 ազգագրական տների թաղամաս, 13 ամրոց, 4 կամուրջ, 1 մետաղագործական համալիր, 4 եկեղեցի, 4 վանական համալիր, 17 մատուռ, 23 խաչքարերի խումբ, 26 առանձին խաչքար, 4 աղբյուր հուշարձան, 2 երկրորդ համաշխարհայինի հերոսների հիշատակի հուշարձան, 2 դամբարանադաշտ, 48 գերեզմանոց: Հուշարձանների ժամանակային բազմազանությունն ընդգրկում է մ.թ.ա. 60-50 հազարամյակից մինչև մ.թ. 20-րդ դարը ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ քարե դարի վաղ ժամանակներից մինչև մեր դարաշրջանը: Դրանք հավասարապես սփռված են ազգային պարկի ողջ տարածքով, իսկ ամենախիտ խմբավորումը գտնվում է Աղստև գետի ափերին և դրա վտակների միջին հոսանքում: Անշարժ հուշարձանների 99 %-ը գտնվում է ազգային պարկի բուն տարածքում և միայն 1 %-ը՝ դրա պահպանական գոտում: Ներկայացված հնագիտական և պատմամշակութային հուշարձանների զգալի մասը կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի զարգացման պատմական ընթացքում, հատկապես 12-13-րդ դարերում: Դրանց առկայությունը հնարավորություն է տալիս այստեղ կազմակերպել պատմամշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և տուրիզմի այլ ձևեր:


Այս հոդվածը ներկայացնում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 43 հուշարձան (24 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	10-13 դդ., 20 դ.	գյուղի հս-ամ մասում, Գոշավանքից 150 մ հս-ամ, Բլրալանջին	—	<a href="#">10.23/1</a>	Հ	
Խաչքար Մբ. Գրիգոր	13 դ.		—	<a href="#">10.23/1.1</a>	Հ	երկատված, քարգործ՝ Հովհաննես
Գերեզմանոց	10-20 դդ.	Գոշավանքից 250 մ հվ-ամ, Բլրակի գագաթին	—	<a href="#">10.23/2</a>	Հ	
Դամբարան Մխիթար Գոշի (մատուռ- դամբարան Մբ. Համբարձման)	13 դ. սկիզբ		—	<a href="#">10.23/2.1</a>	Հ	
Խաչքար	11-12 դդ.	ազուցված է դամբարանի հս պատին, արտաքուստ	—	<a href="#">10.23/2.1.1</a>	Հ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Խաչքար	12-13 դդ.	դամբարանի մոտ	—	<a href="#">10.23/2.2</a>	Հ	կանգնեցված է պատանդանի վրա
Խաչքար	1234 թ.	դամբարանի մուտքի մոտ	—	<a href="#">10.23/2.3</a>	Հ	
Խաչքար	13 դ.	դամբարանի հվ կողմում	—	<a href="#">10.23/2.4</a>	Հ	կանգնեցված է արձանագիր բարձր պատվանդանի վրա
Խաչքար	13-14 դդ.	դամբարանի հվ-աե կողմում	—	<a href="#">10.23/2.5</a>	Հ	երկատված
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից 5 մ հվ	—	<a href="#">10.23/2.6</a>	Հ	կանգնեցված է գետնի վրա
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից 5 մ հվ	—	<a href="#">10.23/2.7</a>	Հ	կանգնեցված է գետնի վրա
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից հվ-աե	—	<a href="#">10.23/2.8</a>	Հ	
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից հվ-աե	—	<a href="#">10.23/2.9</a>	Հ	կանգնեցված է ցածր պատվանդանի վրա
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից հվ-աե	—	<a href="#">10.23/2.10</a>	Հ	կանգնեցված է պատանդանի վրա
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից հվ-աե	—	<a href="#">10.23/2.11</a>	Հ	կանգնեցված է պատանդանի վրա
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից հվ-աե	—	<a href="#">10.23/2.12</a>	Հ	երկատված
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից հվ-աե	—	<a href="#">10.23/2.13</a>	Հ	արձանագիր, երկատված
Խաչքար	13-14 դդ.	դամբարանից հվ-աե	—	<a href="#">10.23/2.14</a>	Հ	երկատված
Հուշակոթող Մխիթար Գոշին	1958 թ.	դամբարանի մոտ	—	<a href="#">10.23/2.15</a>	Հ	
Տապանաքար Աթանի	13 դ.	դամբարանի ամ մասում, մուտքի մոտ	—	<a href="#">10.23/2.16</a>	Հ	հարթ
Տապանաքար Գրիգոր	13 դ.	դամբարանի ամ մասում,	—	<a href="#">10.23/2.17</a>	Հ	հարթ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարա նիշ	նշան.	հավելյալ նշումներ
քահանայի		մուտքի մոտ				
Գյուղատեղի	12-15 դդ.	գյուղից 3 կմ ամ, անտառի «Չոբան-օղլի» բացատում	—	<a href="#">10.23/3</a>	Հ	
Գերեզմանոց	12-15 դդ.	գյուղատեղիի հվ-աե մասում	—	<a href="#">10.23/3.1</a>	Հ	
Խաչքար	12 դ.		—	<a href="#">10.23/3.1.1</a>	Հ	
Գյուղատեղի «Գեղատեղ»	10-17 դդ.	գյուղից 2 կմ հվ-ամ, անտառի բացատում	—	<a href="#">10.23/4</a>	Հ	
Գերեզմանոց	10-17 դդ.		—	<a href="#">10.23/4.1</a>	Հ	ընկած է գետնին
Խաչքարանդակներ ժայռակերտ	13-14 դդ.		—	<a href="#">10.23/4.1.1</a>	S	Գեղարդավանքի օրինակով
Խաչքար	12 դ.		—	<a href="#">10.23/4.1.2</a>	Հ	
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">10.23/4.1.3</a>	Հ	
Խաչքար	14-15 դդ.		—	<a href="#">10.23/4.1.4</a>	S	
Խաչքար	14-15 դդ.		—	<a href="#">10.23/4.1.5</a>	S	
Գյուղատեղի «Թալու դար»	14-17 դդ.	գյուղից 1 կմ հվ-աե, անտառի բացատում	—	<a href="#">10.23/5</a>	S	
Խաչքար	14-15 դդ.		—	<a href="#">10.23/5.1</a>	S	
Գյուղատեղի «Կարճ հողեր» («Գյողակ ֆողեր»)	12-14 դդ.	գյուղից 2 կմ հս, խոզաբուծարանի մոտ	—	<a href="#">10.23/6</a>	S	
Գերեզմանոց	12-14 դդ.	գյուղատեղիի հվ եզրին, բլրի վրա	—	<a href="#">10.23/6.1</a>	S	ավերված
Խաչքար	13-14 դդ.		—	<a href="#">10.23/6.1.1</a>	S	
Մատուռ	12-13 դդ.		—	<a href="#">10.23/6.1.2</a>	S	ավերված
Խաչքար	12-13 դդ.		—	<a href="#">10.23/6.2</a>	S	արձանագիր
Գյուղատեղի «Տզրկածով»	10-17 դդ.	գյուղից 2 կմ հվ-աե, «Գյոլի թալա» վայրում, անտառի մեջ	—	<a href="#">10.23/7</a>	Հ	
Գերեզմանոց	10-17 դդ.	գյուղատեղիի կենտրոնում	—	<a href="#">10.23/7.1</a>	Հ	
Եկեղեցի	16-17 դդ.		—	<a href="#">10.23/7.1.1</a>	Հ	ավերված

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Խաչքար	15 դ.		—	<a href="#">10.23/7.1.2</a>	Հ	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 3 կմ ամ, <a href="#">Պարզ լիճ</a> տանող ճանապարհի երկու կողմում	—	<a href="#">10.23/8</a>	Հ	
Եկեղեցի Սբ. Գևորգ	1251-1255 թթ.	Գոշավանքի հիմնական հուշարձանախմբից 150 մ հվ-ամ	—	<a href="#">10.23/9</a>	Հ	գմբեթավոր, կառուցել են Խաչատուր վարդապետը և Բարսեղը
Գերեզմանոց	13-17 դդ.	Եկեղեցու շուրջը	—	<a href="#">10.23/9.1</a>	S	ավերված
Խաչքար	13 դ.	Սբ. Գևորգ եկեղեցու ամ մուտքի մոտ, արտաքուստ	—	<a href="#">10.23/9.1.1</a>	Հ	կանգնեցված է պատանդանի վրա
Խաչքար	13 դ.	Սբ. Գևորգ եկեղեցու ամ մուտքի մոտ, արտաքուստ	—	<a href="#">10.23/9.1.2</a>	Հ	ստորին կես
Խաչաքանդակներ ժայռակերտ	13 դ.	գյուղից 2 կմ հս-աե, ճանապարհի աջ եզրին, «Խաչ Բամանդ» վայրում	—	<a href="#">10.23/10</a>	S	ծառայում է որպես սրբատեղի
Խաչքար	13-14 դդ.	գյուղի մեջ, Մխիթար Գոշի դամբարան տանող շրասանդուղքից աջ	—	<a href="#">10.23/11</a>	Հ	
Խաչքար	13-14 դդ.	գյուղից 2 կմ հվ-աե, «Գոմի դար» հանդամասում, բլրի վրա	—	<a href="#">10.23/12</a>	Հ	
Մատուռ Սբ. Սարգիս	14-15 դդ.	գյուղի հվ-աե մասում	—	<a href="#">10.23/13</a>	S	ավերված
Խաչքար	14 դ.	մատուռի խորանում	—	<a href="#">10.23/13.1</a>	S	
<a href="#">Վանական համալիր Նոր Գետիկ</a>	12-13 դդ.	գյուղի հս մասում	—	<a href="#">10.23/14</a>	Հ	հիմնադրել է Մխիթար Գոշը

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
<a href="#">(Գոշավանք)</a>						
Գավիթ	1197-1203 թթ.	կից Սբ. Աստվածածին եկեղեցուն ամից	—	<a href="#">10.23/14.1</a>	Հ	ճարտ.՝ Մխիթար Հյուսն
Խաչքար	12-13 դդ.	հենած է գավթի հվ պատին, ներքուստ	—	<a href="#">10.23/14.1.1</a>	S	բեկորներ
Գրատուն-զանգակատուն	13 դ.	գավթից հս	—	<a href="#">10.23/14.2</a>	Հ	կառուցվել է մինչև 1241 թ., 1291 թ. որպես երկրորդ հարկ կառուցվել է Սբ Հրեշտակապետաց եկեղեցի-զանգակատուն ը
<a href="#">Եկեղեցի Սբ. Աստվածածին</a>	1191-1196 թթ.		<a href="#">40°43'21" հս. և 45°00'12" ավ. է</a> 	<a href="#">10.23/14.3</a>	Հ	գմբեթավոր դահլիճ, ճարտ.՝ Մխիթար Հյուսն
Խաչքար	12 դ.	ազուցված է հվ ավանդատան մուտքից վեր	—	<a href="#">10.23/14.3.1</a>	Հ	
Խաչքար	12 դ.	ազուցված է հս ավանդատան մուտքից վեր	—	<a href="#">10.23/14.3.2</a>	Հ	
Խաչքար	13 դ.	հվ ավանդատան մուտքի մոտ	—	<a href="#">10.23/14.3.3</a>		բեկոր
Եկեղեցի Սբ. Գրիգոր	1231 թ.	Սբ. Աստվածածին եկեղեցու հվ կողմում	—	<a href="#">10.23/14.4</a>	Հ	գմբեթավոր դահլիճ, կառուցել են Մարտիրոս և Գրիգոր եղբայրները
Խաչքար	13 դ.	ազուցված է հս ավանդատան մուտքից վեր	—	<a href="#">10.23/14.4.1</a>	Հ	
Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ	1237-1241 թթ.	կից է գավթին հվ-ից	—	<a href="#">10.23/14.5</a>	Հ	միանավ, թաղածածկ, կառուցել է Գրիգոր Տղա

